

րախորեան տաղը իր շողշողուն տողերը կը պարզէ զործիներու դաշնակութեան վրայ. « Աւրախութիւն, ուրախութիւն. — բոլոր մարդիկ իրարու եղբայր են. — գրկեցք զիրար, ովք անթիւ էակներ, բարերար Աստուած մը կը թագաւորէ աստղազարդ բարձունքին մէջ » :

Այս կէտին է որ իր ընարը խորտակուցաւ, Հսկայ երգողն, անհաս հանձնարը զլուխը ծոեց կործակին ու զեռ ողջ ինքինը իրը մնուեալ լացաւ, ինց որ երաժշտութիւնը լուսեղին շառայիլ մը վերածած էր, ալ չէր կնար լսել իր զաշնակութեանց թրթուացումները, կոյր էր տեսնելու այն պայծառութիւնը որով կապրէր. վասն զի ցաքը ուղեց իր սկասընդ ձեռքերով ցոցել ընդմիշտա անոր ականջները, իրը թէ անով կարենար հոգույն աշշերն ալ փակել: ինց ի զուր՝ կոտրաւու ասափճան, ուժզին զարկաւ դաշնամուրի ստեղներուն, զուր տեղ մեծաձայն աղաղակեց իր իրաւունքը արտայայտուելու, ըսելու, տակալին իր հոգույն մէջ անհամար քերթուածներ փակ մնացած էին, կը վրդպէին, կ'ուզէին արտագեղուիլ: Երբեք ձայն մը շթափանցեց իր հոգույն լուսութեան մէջ՝ ուր արդէն յացացը և յօրինած էր վերջին համերգութիւնն ալ, անձնա հրաշը մը:

Ալ մինակ էր իր երգի և ձայնի աշխարհին հետ, անկից վերջ ինց բնաւ չժպանցաւ, աւելի ճշշտ, ունեցաւ համակամորի մը դալուկ ժպիար՝ երբ մահը վրայ հասաւ. 1827ի մարտ 26ն էր:

Այսպէս Գերմովին բոլորովին թագուեցաւ իրուերու և համբերու փոշոս ընտանիքին մէջ, ինց՝ որ լոյսի ու ձայնի համար ծնած, համերգութեանց մէջ արձանացուցած էր երաժշտութեան տիեզերական պատմութիւնը: Անի բազմաթիւ մանր զործել ալ, ինչպէս և թատրերաժշտութիւն մը Fidelio անունով. սակայն ինչ որ անոնց մէջ ուրագրուած է, արդէն մեծ ծաւալով և շունչով կը պարունակուին համերգութեանց մէջ. ասոնցմով ինց կանգնեցաւ յուշարձանի մը պէս ան-

մահական գեղեցկութեան սահմանին վրայ, ուսկից յետոյ անկումը անխուսափելի էր:

ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

« ԶՈՐՍ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԸ »

(Դրւ Ղետակ Եղան Դաւթան. Բ. որ. Փարւ 1923)

(Եար. տես Բազմ. 1927, էջ 22)

Գուրեան Սրբազն մէն մի Աւետարանչի յատուկ առաջադիր նպատակէն առիթ առնելու յիւր պատմական ըննութիւններն հոգեոր յորդորով մը կը վերջացնէ, որոնց մէջ նկատողութեան և զիտել տալու արժանի կէտեր մը միայն անցողակի պիտի շօշափէնց, ուկ ճշմարտութեան անբռնարաբելի իրաւունքներն պաշտպանելու համար, այսու վստահ ենց թէ նոյն ինքն Սրբազնին հաճոյք մշրած պիտի ըլլանց, քանի որ իւր իսկ զինակով ճշմարտութեան սիրող մ'է:

Այսպէս Մատթէի մէջ ևս Յիսուսի մեսիայութեան գաֆափարին հետ հաւատարապէս շեշտուած է անոր աստուածութիւնը, ինչ որ ոչ միայն անտեսուած է այլ անուղղակի կը մերժուի Սրբազնին (տես էջ 20-24):

Ինչպէս անհակնալի է հեղինակին միտքը երբ կը գրէ « Երկնքի պէտք է հաւատալ, այսինցն պէտք է հաւատալ գաղափարին բազառորորեան » :

Դարձեալ Հազարամէից մոլորութեան յիշասակութիւննէ վերջ երկդիմի միտք մ'ունին այս տողերը. « թէ և դժբաղարար դես Եկեղեցիներ կան որ կը սպասեն երիրորդ գարտափի » : Միթէ Սրբազնն ալ եկեղեցւոյ ուղղափառ Ս. Հարց և մեր իսկ համայն ազգային Ա. Հայրապետաց մոցին համեմատ, չի սպասեր Ընկերական Եկեղեցւոյ հնա երկրորդ կամ յետին գալստեան

Քրիստոսի. «Գալոց է նովին մարմառն և
փառօց Հօր դատել զկենապնիս և զմո-
ռեալը » Կ'ըսն հնագոյն հանգանակները,
մինչեւ իսկ Առաքելականը: Ե՞րբ պիտի
ըլլայ այս երկելի թագաւորութեան հան-
գիսաւոր պատկումն եթէ ոչ Քրիստոսի երկ-
րորդ կամ յետին դայտակամք: Յայտնի է թէ
այս ուղղափառ մտցով ըմբռնուած գո-
րուատը՝ յանհունս տարրեր է Հազարա-
մեան մոլորութենէն որ ճշմարտին սիալ
ըմբռնումն և աղաւաղումն է միայն:

Նմանապէս ծայրայեղութիւն մ'է, և
եթէ ներկիլ է ըստ բանապաշտ դրութեան
նախապաշտումներու ազդեցութիւն մ'՝,
հետեւանդներն. « Առաջին առթիւ Ղոկաս
և Պօդս են որ կ'ըմբռնեն թէ Քրիստոսի
Աւետարանը միայն Հոկից չի պատկաներ,
այլ ամբողջ մարդկութեան...» (էջ 63):

Այս տողերը ոչ միայն չեն հաջառություն Արքույն Արքույն Հեղման հետ, որով Առաքեալը գէթ այն իմաստութեամբ լցուեցան, որ կը միերարեի փրկագործորեան խորհրդյուն էւութեան, Եկեղեցոց կազմութեան, մասման և վախճանին, յորս առաջինն է ախեղբարկանութիւնը. այլ կը հակասեն պատմական իրականութեան ալ, կը հրաւիրենց Արքազանը ուշի ուչով համեմատելու Մտթի այն առակները յորս կը շեշտուի երկից արքայութեան, ցրիստուական հաւատորին ընդհանրականութիւնը. Այսպէս Մտթ. Բ. 11. Յիսուս յետ զրուտաելու հեթանու հարիւրապեսին հաւատացը, մինչև Նմանը իսրայէլի մէջ իսկ չէր զած, կ'ըսէ. «Ամէն ասեմ ձեզ, զի բազումք յարեկից և յարեմտից կեկսցնե՞ բազմեսցին ընդ Արքահաման և ընդ Սահմակայ և ընդ Յակովոյու յարքայութեան երկից, և որդիքն արքայութեան ելցն ի խաւարն արտաքին»: Ալ ըսնց են այս արևելցից և արևմտեայց, եթէ ոչ հեթանոսները, որ հրեայ ցեղին զահակից պիտի ըլլան երկնից արքայութեան, այս է եկեղեցւոյ մէջ, մինչ իսրայէլի զաւակներն իսկ պիտի արտաքսուին: Լա զիտենց որ «աբգայութիւնն երկնից» ինչպէս հոս և բազմից ալլոր, Նոր-Կոտակարանի յեղուով՝ նախ իշեղեցին

կը նշանակէ, և ապա իրեւ հետեւանց մը յաւերժական փառքը՝ Ս. Հայրերու մեկնովթեան համեմատու — Նոյնը ցոյց կու տան Մտթ. Ժ. 17-18 և իլլ. 83-46. Դարձեալ յիշենք այս նշանաւոր տողերը զորս հայ եկեղեցականը ամէն կիւրակի Կ'երգէ տաճարի աւետարանի մէջ. «Եւ բարողեսից աւետարանս արքայութեան ընդ ամենայն ախեղերս՝ ի վկայութիւն ամենայն հերանաւաց, և ապա եկեղեց կատարած» : Կը զարմանանց թէ ինչո՞ւ Արրազանը Մատթէոսի այս իմաստներն նկատի առնելով ուրոյն դատաստան մը կազմելու տեղ, այնքան ազդուած է արցի ըննադատներու անիմայնախապաշարութերէն : Հուսկ բանանց նոյն Մտթ. իլ. 18-20 վերջին համարներն վերջին զլյոյն. «Գնացէք այսուհետեւ աշակերտնեցէք զամենայն հերանաս, մկրտեցէք զնոսա...» ինչ աւելի քան զայս բացայայտ, համայն հեթանոս աշխարհը ձեզ աշակերտ ըրէք և մկրտեցէք կը գրէ Աւետարանիշը իր վարդապետին Յիսուսի քերնով: — Այս նոյն գաղափարը Մարկոսի մէջ ալ շեշտուած է, կը բաւէ մրայն կարդալ Մըկ. Ժ. 15 «Ելրթայր յաշխարհ ամենայն, և բարողեցէք զամետարանն ամենայն արարածոց»: Որ հաւատայ և մկրտնեցին կ'եցցէ, և որ ոչ հաւատայ դատապարտնեցին: Աւեմն Մարկոսի, Պետրոսի աշակերտին համար ալ, այնքան ընդհանրական և Մեսիական հաւատը որ հեթանուց՝ այնու որ չի հաւատար ի լուր աւետարանին՝ դատապարտնեցի: — Թողունց Յովհաննէսը, որուն մտցի մասին ոչ մի տարակոյն կայ:

իսկ Գործը Առարելոցի պատմութիւնը՝
որ Պետրոս Առարեալը սկզբէն տատամ-
սոտ կը ներկայացնէ, դիւրին է մակնել ըսե-
լով նախ՝ թէ առարեալը Յիսուսի պատուէ-
րին համեմատ քարոզութիւնը պիտի և սկզին
տաղջ հրեաներէն։ Երկրորդ՝ Պետրոսի այդ
տատամութիւնը իր անձին համար չէր ո՛ր-
քան միւս հրեաները չիրացնելու համար։
Առարեալը հրեաներու ատենարանած ա-
տեն միշտ կը շեշտէ «Ձեզ նախ յարոյց...»
ուր նախո՞ւ որու եռու առաջն ու նա ոհ-

տէր թէ ոչ-հրեաներու համար ալ մարդացած է Քրիստոս իսկ կոռնելիոսի զարձը, Պօղոս Առաքեալի քարոզութենէն առաջ տեղի ունեցած, ամէն սատամութիւն կը փարատէ նոյն իսկ հրեայ հաւատացեալ-ներու մտքին մէջ:

Աստի կը հետևի որ հիմովին վարկպատագի վարկած մ'է Սրբազնին վերոյիշեալ կարծիքը: Պօղոսի նոր յայտնութիւնն մը չէ եղած այս մասին անձանօթ միւս առաքեալներուն, թէ և հարկ է ընդունիլ որ նա մասնաւոր կոչում մ'ունեցաւ յառաքելութիւն հեթանոսաց: Միւս առաքեալը իրենց քարոզութեան երախայրիցը պարտական էին Հրէից, նոյն ինքն թիսուսի պատուէրին համեմատ (տե՛ս Մաթ. Գլ. Ժ): Փրկիչն ալ իր կեանցին եռամենայ զործունէութիւնը այս վախճանիս նուիրեց, ուրեմն ինքն ալ կ'անգիտանար իւր Աւետարանի ընդհանրականութեան հանգամանք... Սրբազնին վեն աստիճանը վիրաւորած կը համարիմ պահիկ՝ մ'իսկ վերագրելով իրեն՝ նման կարծիք մը, որմէ ամենաէին հետի իմ:

Նմանապէս անարդարանալի են հետեւալները. «Եթուսա նոյն իսկ իր անձին մէջ տկար զզաց երր հաւատքի ուժը տկարացաւ իր շուրջը և իր մէջ (Մարկ. Զ. 5-6) Եւ ամէն անզամ որ ան իր մէջ կը զզար անհաստատ և յիշարձէկ, ինչպէս ուրիշ որ և և անհատ պիսի զզար, տեմիշապէս ինքդիէքք հադրդագուրքան մէջ կը դնէր Աստուծոյ հետ և այսու կը պահէք այն գերահրաշ զօրութիւնը որով աշխարհի փրկութիւնը պատրաստեց»: Եւ մանաւանդ էջ 90-94 հատուածը, ուր Ալրի Հեղինակն — սիրոյ կեանքով, աստուծուրքան ու մարդկուրքան երկու թեուրքանց միացումը կը դնէ ի Յիսուս, միուրին մը զոր ամէն հաւատացեալ պիսի յաշողի իրականացնել իր անձին մէջ սիրոյ կեանքով, — Ասոնց անըմբնելի են, և եթէ չ'ուզենց մեղմացնել իմաստներն իրեւ խորհրդապաշտական խորհրդածութիւններ, թող ներուի ի սկը ձշմարտուրքան, որուն համակիր և պաշտօնաւոար կ'ենթադրեմ

զԱրրազանն, ասոնց Քրիստոնէական հաւատացն անտեսող խօսքեր են:

Նախ, Բանին Աստուծոյ մարմանացումը, որով Աստուած մարդ և մարդն Աստուած եղաւ ի մի անձին Քրիստոսի, իրական, դոյցական, աեշիոր և անձնառուական (hypostaticum) միուրին մ'է, որով Կուսին Մարիամու կուսածին որդին՝ միանգամայն Աստուած է և մարդ, նոյն Յիսուսի մարդկային միտքը, որ այլ է Բանին Աստուծոյ ամենագէտ իմացողութիւնն, (որով հետեւ ի Յիսուս ինչպէս երկու բնութիւններն այսպէս նաև անոնց ստորոգելիները կը զանազանուին, իրօք՝ թէ և աերածանելի են) իրական տեսովթեամբ ակն յանդիմանն կը դիտէր յինքան զԱստուած, զԱ. Երրորդութիւն, և Աստուծոյ մէջ կը տեսնէր ամէն արարած, ուրեմն ի Յիսուս, յայտնի է մարդկութեան կողմանէ ևս, հաւատքի կամ յասոյ տեղի չի մնար: Ի՞նչ կը նշանակէ ուրեմն նաշատքի տկարացումն ի Յիսուս:

Յետոյ ի՞նչ ըսել է հաղորդակցութեան մէջ դրուիլ Աստուծոյ հետ, Անոր որ ինքն Աստուած է:

Հուսկ ով է այն որ կրնայ իրականացը-նել Սիրոյ կեանքով մը իր անձին մէջ այսպիսի հրաշալի գերբնական միութիւն մը, ի՞նչ կը նշանակեն նոյնպէս. «Եւ Յիսուս ասացինը եղած է մարդկութեան մէջ որ սիրոյ կեանքը ապրելով Աստուծոյ՝ աստուածային բնութիւնը անշփոթ միութեամբ միացուց իր մարդկութեան մէջ», (էջ 91): Ուրեմն կրնայ մարդ մը, զոր Յիսուս կը կոչէ Սրբազնը, արժանանալ աստուածութիւնը միացնելու իրեն. ով է այն արարածը որ արժանից ունենայ զԱստուած իր մէջ ձգելու չափ և անոր հետ մի անձն կազմելու... ի՞նչ է արժանիքը, և ի՞նչ բանի կրնայ արժանանալ արարածը Արարչին հանդէպ:

Ասոնց բառեր են, որոնց իմաստը եթէ ծանրապէս բանին կըոփէ չճշդուի՝ ահաւոր մոլար հետեւանցներու կ'առաջնորդեն զմեզ:

Հուսկ կէտ մ'ալ զոր չենց ուզեր ու-

շաղրութենէ փախցնել այս է. « Յիսուսի րողած բոլոր հարատորիներ, այս չըս Աւանարաններն են, կ'ըսէ: Ասնց բաւական են քստ ամենայնի եկեղեցոյն համար. վասն զի եկեղեցին հաղորդակցորեամբ Աւանարաններուն լատ ամենայնի կ'ընդունի կեանքն Յիսուսի » (Էջ 95): Այս վճռով կ'արտաքան Սրբազնը Ա) Եկեղեցոյ Աւանարութիւնը որ հաւատոյ նշմարտութեանց մեծարժէք աղրիւնիրէն է, և Բ) զեկեղեցին իրենին, որ Աւանարաններուն կեանք կուտայ, ոչ թէ Աւետարանը Եկեղեցոյն: Վասն զի, մի միայն Աւետարաններով կամ Ա). Գրքով առանց Նուիրապետութեան մը որ հեղինակաւոր պահապանն և մեկնիչ լինի Ս. Գրքի, ոչ թէ Եկեղեցի, այսինքն ժողով հաւատացելոց, այլ ապերասան մարդկան քառու մը միայն կը պատրաստուի, ինչ որ ցոյց տուաւ Լուսերի ապանդը, և այսօրուան Աւանարանական յորջորջուած անգրուի տարիիր:

Հոգւոյն Սրբոյ գալստենէն վերջ արդէն զոյսութիւն ունէր Յիսուսի Եկեղեցին իւր Նուիրապետութեամբ և հաւատացելոց բազմութեամբ զեռ Աւետարանները շիրմաքրուած, և եթէ շիմբազրուէին ասոնց, միթէ Եկեղեցին պիտի չտնէր: Պատմութենէն զիսենց որ թէ Աւետարաններու և թէ՛ թղթոց իմբազրութիւնը պատահական առիթներէ և մասնական Հարկերէ մղուած կատարուեցաւ: Բաց աստի Յիսուս յետին հանդիսաւոր ժամուն, երբ պիտի թողուր իւր գործի մարդոց, մետասան Ասաքերոց, « Գնացէք այսուենեա՛ աշակերտեցէք զամենայն եերանոս, մկրտեցէք զեռոս յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, Ռատոցք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչեւ ի կատարած աշխարհի » (Մատթ. իր. 19-20)

ըսաւ, ուր ոչ մի ակնարկ կ'ընէ զրելու կամ զրով քարոզելու: ոչ հոս ոչ այլուր. ոչ Քրիստոս ոչ Աւարեալը յանձնարարացն են Աւետարան զրել: Ուրեմն Եկեղեցին առանց Աւետարաններուն կազմուեցան առողջ անոնց՝ կեանքն Յիսուսի ընդունեցաւ: Այդ աստուածային կեանքը միայն անհրաժեշտ է, և ատիկա ալ ընդունելու համար՝ Հարկ է անդամ լինել այն մարմույնի զոր Յիսուս կազմակերպեց, Ա). Եկեղեցոյն Այս մարմնը Մի է, Ասաքերական և Ենիկաւրական, ըստ անվիճելի վարդապետութեան նոր Կուակարանի և Ա). Հայրապետաց: Այս որոշ և մի Եկեղեցոյն հուատայիս և հաւատաքին մերձեցուալով միայն կը բարեփոխուի անհատը և հասարակութիւնը, կը փրկուի նշմարիտ Զարին կեղեցուէն Քրիստոսի փրկարար մարմնոյն աղջեցութեամբ, հուակ կ'ընդունի ամէն բարից և միսիթարութիւն զորս կը յիշատակէ Սրբազնը (Էջ 49) իւր հասորիկին մէջ: Կը մազթենք որ այն առ հաւատու մերձեցուալը՝ որուն կը յորդորէ Սրբազնը, ըլլայ առ նշմարիտ հուատու, առ ձշմարտուրիւնն, որուն իրըն «սին և հաստատութիւն» (Ա. Տիմ. Գ. 15) կանգնեց Քրիստոս իւր Եկեղեցին, իւր միակ Նուիրապետութիւնը որ մինչև Անոր գալուատը անայլայլ և առանց քայլայման պիտի տեէ, և անոր մէջ ձշմարտուրիւնը՝ իրըն թանկազին մարգարիտ մը ուկեղէն արկդի մէջ: Սրբազնը՝ սիրող և խուզարկու ձշմարտուրիան՝ անշուշտ պիտի սիրէ նաև զայն՝ որ ցարդ պահպանէ և զշշմարտուրին դարերու մրրկալից հորվոյրին մէլ, որ է լինդամերական Ա). Եկեղեցին զոր յոյն բառով դի Կածօլուկն էռալիսա կոչեցին Ա). Հարք:

Հ. Կարասե Աւաստան

